

տութեամբ կատարեն՝ ըստ իւրաքանչիւր անձանց զօրութեան » (36): Այդ ծոմերուն երկարագոյնն է եօթնօրեայն, որոյ օրինակները շատ են. մեծն Ներսէս իւր արսորման մէջ «յեւթն աւուրն ի կիշրակէն հասնայ միայն, ապա ճաշակէր», կ'ըսէ Փաւստոս (93): Կիւրակէն աւելի փափուկ անցնելու բարոյական հարկն էր՝ որ այդ օր ձգել կու տար լուծումը (աստ, 290): Յովսիա «չարարապահն» կը կոչէ Թաթլոյ վանուց կրօնաւորները (Հյպտ. 192): Լամբրոնացին իւր կամաւոր պահեցողութեան մէջ նոյնպէս «գառուրս կօրն անսուաղ կեայր» (անդ, 420). եւ տեսանք արդէն «չարարապահուրեան» յիշատակն Ալաւկայ որդւոյն քով եւս (աստ, 404): Ասոնց համեմատութեամբ շատ մեղմ էր Յովհ. Տուեցւոյն չորեքշաբթի եւ ուրբաթ «անհաց եւ անջուր» կատարելու ժուժկալութիւնը (Վրդ. 154):

Բայց աւելին կայ. քառասնօրեայ ծոմապահութիւնն ալ յիշուած է երբեմն, որ հարկաւ արդիւնք էր Մովսեսի, Եղիայի եւ մանաւանդ Յիսուսի օրինակին հետեւելու ջանից: Լուսաւորչի համար կը պատմուի՝ թէ բոլոր կեանքը, «քառասուն քառասուն օր պահովք» անցուցեր է (Ազթ. 638-9), զոր Խոսրովիկ իրաւամբ ծոմ կ'իմանայ,